

## ՌՈՍՏՈՄ ՌՈՒՄԻՆԻԱՅՈՒՄ 1894-1895 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Նորահայտ վավերագրեր Ռուսաստանյան կայսրության արտաքին  
քաղաքականության արխիվից

ՀՅԴ պաշտոնաքերը «Դրշակի» տպագրության կազմակերպման և կուսակցության կառույցների ստեղծման համար Ռուսումը (Ստեփան Չորյան) 1890-ական թվականներին ակտիվ գործունեություն է ծավալել Եվրոպական մի շարք երկրներում՝ Ռումինիայում, Շվեյցարիայում, Բուլղարիայում։ Այդ նպատակով նա սերտ կապեր է հաստատել ինչպես Եվրոպայում բնակվող հայ գործիչների, այնպես էլ օտարերկրացի հեղափոխականների հետ։ Ռուսումի Եվրոպական գործունեության դրվագներից մեկն էր նրա 1894 թվականի նոյեմբերյան այցելությունը Ռումինիա՝ պարսկահպատակ Վրբանես Փափազյանի կեղծ անձնագրով։

Այս իրադարձության կապակցությամբ նախորդ ուսումնասիրողներն արդեն արձանագրել են, որ ժամանելով Բուխարեստ և հանդիպելով բուլղարացի հեղափոխական, անարխիստ Պարասկե Ստոյանովի հետ, Ռուսումը նպատակ ուներ ուսմինական անձնագիր ձեռք բերել՝ Կ. Պոլիս թափանցելու համար։ Սակայն, քանի որ դրանից հետո նա այցելել է նաև Գալաց, տեղի ոստիկանությունը, որի ձեռքից Ռուսումը 1893 թ. սկզբներին կարողացել էր փրկել ու Շվեյցարիա տեղափոխել «Դրշակի» տպագրության տառերը, այս անգամ ձերքակալում է նրան<sup>1</sup>։ Սկիզբ է առնում մի հետաքննություն, որի մասին տեղեկացվում են նաև ցարական Ռուսաստանի արտգործնախարարությունն ու Ռուսականության դեպարտամենտը։ Այդ կապակցությամբ Կովկասի կառավարչապետի գրասենյակին տրամադրված սահմանափակ տեղեկություններն ամփոփվել են Թիֆլիսի նահանգապետին հասցեագրված 1895 թ. Փետրվարի 8-ի գրության մեջ<sup>2</sup>։

Սակայն, ինչպես ուսմինական ոստիկանության ձեռնարկած հետաքննության նյութերը, այնպես էլ ցարական Ռուսաստանի իշխանության կենտրոնական մարմինների ստացած գրությունների զգալի մասը մինչ օրս անհայտ է մնացել, որովհետև հանգրվանել է Ռումինիայի և Ռուսաստանի արխիվներում։ Մասնավորապես՝ Ռուսաստան հասած տեղեկությունները պահպում են Մոսկվայում՝ Ռուսաստանյան կայսրության արտաքին քաղաքականության արխիվում։ Դրան-

1 Տե՛ս Գևորգ Խովեհնյան, ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Եր., 2006, էջ 344։

2 Տե՛ս Գևորգ Խովեհնյան, Նորահայտ վավերագրեր ՀՅ Դաշնակցության իշխանադիրների (Ցրիստոսի Սիրայելան, Սիմոն Զավարյան, Ռոստոմ) 1890-ական թվականների գործունեության մասին, «Բանքեր Դայաստանի արխիվների», 2003, N 1, էջ 25-26։

Դ (Ըստ պահանջման ամփոփում 2012)

Վեյ Խամահայկական հանդես

ցում հետաքրքիր մանրամասներ կան Ռուսումի ձերբակալության արդյունքում ռումինական ոստիկանության առգրաված փաստաթոթերի, ինչպես նաև նրա հետ կապված՝ հայ, բուղարացի և ռումինացի գործիչների մասին:

Ոստիկանական գեկուցագրերում դաշնակցականներին տրված «անարխիստներ» բնորոշումը կապված էր հետևյալ հանգամանքի հետ. Ռուսումը ժնևում բնակվող հայ անարխիստ Ալ. Աքաբեկյանի միջոցով էր ձեռք բերել բուղարացի հեղափոխական, անարխիստ Պարասկե Ստոյանովի հասցեն, որն էլ նրան ծանոթացրել էր իր ռումինացի գործընկերների հետ:

Իսկ ինչ մնում է ռումինական ոստիկանների կողմից Ռուսումից առգրավված փաստաթոթերին, ապա լրանցից հատկապես կարևոր են նրան նամակները, որոնք բացահայտում են Ռուսումի կապերն ու առնչությունները 1894 թ. Ռումինիա այցելած Հրայր-Դժոխքի (Արմենակ Ղազարյան) և հայ ազատամարտի այլ գործիչների հետ:

Ստորև ներկայացնում ենք Ռուսաստանյան կայսրության արտաքին քաղաքանության արխիվի «Պոլիտարխիվ» ֆոնդում (Փ. 151, գ. 482, գ. 2830) պահպող՝ Ռումինիայում Ռուսումի ձերբակալության մասին արխիվային գործը, որը հրապարակվում է առաջին անգամ՝ տողատակերում մեր կողմից կատարվող համապատասխան մեկնարանություններով:

Մկրտիչ Դ. Դանիելյան (Վանաձոր)  
Պալրմ. զիկր. թեկնածու

## ROSTOM IN ROMANIA, 1894-1895

Newly Discovered Documents from the Foreign Policy Archives of the  
Russian Empire

Mkrtich D. Danielyan

**ՈՎՔԱ** ֆ. «Պոլիտարխիվ», ֆ. 151, գ. 482, գ. 2830,  
**Թերթ 2**

**Արտաքին գործերի  
մինիստրություն  
Ասիական դեպարտամենտ  
Գործազար  
3 հունվարի 1894 թ.**

**Ոստիկանության  
Դեպարտամենտի Տնօրենից  
Նորին գերազանցություն  
Ն. Ի. Պետրովին**

Ողորմած Տեր  
Նիկոլայ Իվանովիչ  
Պարտքա եմ համարում Ձերդ Գերազանցությանը տե-  
ղեկացնելու համար ուղարկել Բոլիսարեստի մեր դես-  
պանի դեկտեմբերի 21-ի N 47 գելուցման պատճենը՝  
Գալաց քաղաքում չորս հայկական ազիտատորների  
ծերբավաման մասին: Ընդունեք իմ խորին հարգանքները և  
Ձերդ գերազանցությանը հավատարմության հավաստիք:

26 դեկտեմբերի 1894

Ն 47

Նորին գերազանցություն

Ն. Կ. Գիրսին

Պետական խորհրդական Լադմենսկին մասնավոր նամակով իմ ուշադրությունը հրավիրեց Գալաց քաղաքում կայացած՝ հայկական ազիտատորների ծերբավաման վրա, որոնց մոտ հայտնաբերվել է գրագրություն ուղարկեն և հայերեն լեզուներով, ինչը վկայում է նրանց առնչութ-  
յունների մասին՝ մեր հայերի հետ:

Այնուհետև՝ Արտաքին գործերի Թագավորական Մինիստրությունը, ի պատասխան այս գոր-  
ծի մասին հնարավորինս մանրամասն տեղեկություններ հաղորդելու իմ խնդրանքի, տեղեկաց-  
րեց, որ ծերբավալվել են չորս անձնավորություն:

1. Բոլղարացի Պարասկե Ստոյանովը, որը վերջերս ֆեղջեր էր աշխատում Ռումինիայի Վասլուչսկիի իիվանդանոցում, և ինչպես ներկայում է պարզվել, նա Ֆրանսիայից, Բելգիայից, Խոտլիայից և Ծվեյցարիայից արտաքսված անարխիստ է:

**Թերթ 4.**

2. Ռումինացի երկու ուսանողներ, -Չոսիմ և Սուշոյ, երկուսն էլ անարխիստներ.

3. Պարսկահպատակ Ռուստեմ Վարտանազի Փափազյանը, ծագումով հայ, անարխիստական գործակալ Ժնևից

Վերը նշված անձնավորություններից առաջին երեքը նամակներ են ստացել Ռուսաստանից և Թուրքիայից՝ Փափազյանին փոխանցելու համար:

Ռումինական կառավարությունը որոշում է ընդունել երկու օստարահպատակներին՝ Ստոյանովին և Փափազյանին, վտարել Ռումինիայից, իսկ մնացածները գտնվում են հետաքննության տակ:

Իր հերթին, Արդարադատության մինիստրը, պր-ն Լագովարիից<sup>3</sup> տեղեկանալով նշված գոր-  
ծի վերաբերյալ իմ հարցման մասին, օրեքս այցելեց ինձ և իրեն հատուկ գգուշավորությամբ  
խոստացավ մոտ ժամանակներս անմիջապես պարզել դեռևս չափարարված քննությամբ հայտ-  
նաբերված մանրամասները, ուղարկել ինձ վերը նշված անարխիստների փոտոլուսանկարները,

3 Լագովարի Ալեքսանդր (Lahovari), -1891 թվականից Ռումինիայի արտաքին գործերի մինիստր:

այնպես էլ հայտնաբերված ոռուերեն և հայերեն լեզուներով նամակների պատճենները, ինչպես նաև՝ նրանց հանգավոր գործունեության մասին մանրամասն գրություն:

Պր-ն Մարգիլոմնի խոսքերից պարզվում է, որ այս հայ ագիտատորները չեն բավարարվել Հայկական պետության անկախության վերականգնման երազանքով և իրենց նպատակներին հասնելու համար նրանք միացել են վտանգավոր անարխիստների հետ, որոնք դիմում են գործով քարոզչության:

Խորին հարգանքներով և հավատարմությամբ՝ պատիվ ունեմ լինելու  
Ողորմած Տեր, Զերդ Բարեծնություն  
Զեր խոնարի ծառա Ն. ....

#### Թերթ 6.

11 հունվարի 1895 թ.

Բովիսարեստ, 6 հունվարի 1895 թ.

Ն 1

Ոստիկանության Դեպարտամենտ

Խորին գերազանցություն

Ն. Կ. Գիրսին

Ողորմած Տեր Նիկոլայ Կարլովիչ

Արդարադատության մինիստրը, որպես լրացում իր առաջին հաղորդագրության, փոխանցեց ինձ դրան կից ներկայացվող նամակների բնօրինակները և իր կողմից կազմված գրությունը՝ այստեղ ձերքակալված և Ռումինիայից վտարված երկու անարխիստների՝ բուլղարացի Պարասկե Ստոյանովի<sup>4</sup> և պարսկահայպատակ Ռուսուս Վարտանեղի Փափազյանի մասին, կից ֆուտուրիսամկարով, հայ հեղափոխական «Դրոշակ» ֆեղերացիայի երաշխավորող նամակով (Ներդիր Ա.) և Վիեննայում<sup>5</sup> իրատարակված հայկական ծրագրային բրոշյուրի օրինակով (Ներդիր Բ.), ինչպես նաև նախկինում այստեղ հանված այս երկու անարխիստների նկարներով:

Պարոն Մարգիլոմնի վերը հիշատակված (թերթ 7) ոռուերեն և բուլղարերեն լեզուներով նամակների տեսությունից ես նկատեցի, որ այս հեղափոխականները կապեր ունեն Կիսի և Օղեսայի հետ, այդ պատճառով էլ ես դրանք հանձնեցի այստեղ ժամանած՝ Ռումինիայում ներկողմից հաստատված, ներկայում գաղտնի, ոստիկանական գործակալության ընթերցմանը:

Այսուհետև նոր հանդիպման ժամանակ, Արդարադատության մինիստրը հաղորդեց ինձ լրացուիչ կերպով հավաքված տեղեկություններ վերը նշված անարխիստների գրագրության մասին, որոնցից, նրա խոսքերով, ավելի հստակ է դառնում, որ նրանք աշխույժ հարաբերությունների մեջ են Լոնդոնի և Ժնևի հեղափոխական տեղորխիստների հետ:

Խորին հարգանքներով պատիվ ունեմ Ողորմած Տեր  
Զերդ գերազանցության խոնարի ծառա Ն.

#### Թերթ 8

Ոստիկանության Դեպարտամենտի Տնօրենը, հավաստելով իր  
հարգանքը Նորին պայծառափայլություն կոմս Դիմիտրի Ալեքսենի-  
չին, պատիվ ունի պրանով հետ վերադարձնել ընթացիկ տարվա ապ-  
րիլի 15-ի N 116 գրությամբ ուղարկված՝ ուսմինական արդարադա-

N 341

4 Պարասկե Ստոյանովը բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի նշանավոր գործիչ, 1888-1889 թթ. Բուլղարիայի խորհրդարանի նախագահ Զախարի Ստոյանովի որդին էր:  
5 1890-ականներին ՀՅԴ հրատարակած բրոշյուրները կրում էին «Վիեննա, ՀՅ Դաշնակցութեան ազատ տպարան» վերտառությունը: Այս ապակողմորոշող տեղեկությունը տպագրվում էր ոստիկանության ուշադրությունը շեղելու համար:

N1095	տուրքյան մինիստր Մարգիլոմնի գրության բնագիրը և խուզարկության ժամանակ Փափազյանից բռնագրավված նամակներից մեջըբումները:
N 3721	5 մայիսի 1895 թ.
	Նորին պայծառափայլություն
	կոմս Դ. Ա. Կանիստին

**Թերթ 13**

Ռատիկանության Դեպարտամենտի Տնօրենն	<u>Ն 38</u> տեղ. 1895 թ.	Խորհրդապահական
---------------------------------------	-----------------------------	----------------

Ողորմած Տեր,

կոմս Դիմիտրի Ալեքսեևիչ

Այս տարվա հունվարի 3-ի N1 նամակով պատիվ ունեմ խոնարհաբար խնդրելու Ձերդ պայծառափայլությանը ստանալու հայկական շարժմանը մասնակցող, Գալացում ձերբակալված անարխիստների մասին մանրամասն տեղեկություններ և ֆոտոլուսանկարներ և շմերժել դրանք ներկայացնելու Ռատիկանության Դեպարտամենտին:

Ընդունեք, Ողորմած Տեր, հարգանքներիս հավաստիքը:

N 174

9 հունվարի 1895 թ.

Նորին Պայծառափայլություն

կոմս Դ. Ա. Կանիստին

**Թերթ 15**

Արտաքին գործերի մինիստրություն	<u>Ողորմած Տեր</u> 16 հունվարի 1895 թ.	Խորհրդապահական
	Ողորմած Տեր Նիկոլայ Բվանովիչ	

Ի պատասխան Ձերդ Գերազանցության այս տարվա հունվարի 3-ի N 1 խորհրդապահական նամակի՝ պատիվ ունեմ սրանով ուղարկել Բոլիսարեստի մեր դիսպանի այս տարվա հունվարի 6-ի գեկույցի պատճեն՝ նրան կից ներդիրներով և անարխիստներ Ստոյանովի և Վարտանեզի ֆոտոլուսանկարներով:

Այս ամենին պարտք եմ համարում լրացնել, որ իմ կողմից Հռչմեյստեր Նոնոնի հետ միասին քայլեր են ձեռնարկվել մինիստրության Ձեր վարչությանը մանրամասն տեղեկություններ ուղարկելու ուղինական երկու ուսանող անարխիստներ՝ Զոսիմի և Մուշոյի մասին:

Ընդունեք, Ողորմած Տեր, հարգանքներիս հավաստիքը:

**Թերթ 17-18**

Ուսմինիայում Ուսական կայսերական միսիս	<u>Ողորմած Տեր Կոմս</u> Դիմիտրի Ալեքսեևիչ	Խորհրդապահական
3 ապրիլի 1895 թ. N 74		

Ի պատասխան Ձերդ պայծառափայլության այս տարվա

**Բոլիսարեստ** հունվարի 16-ի N 18 գրության, ես անմիջապես դիմեցի Արդարա-  
**Պայծառափայլ կոմս** դատության մինիստրությանը՝ խնդրելով լրացուցիչ տեղեկություն-  
**Դ.Ա. Կանիստին** ներ հաղորդել Գալացում Պարասկե Ստոյանովի և պարսկա-  
 հպատակ Վարտանես Փափազյանի հետ ձերբակալված ոռոմինացի երկու ուսանողների՝ Զոսի-  
 մի և Մոլոչյի մասին:

Դր-ն Մարգիլունը, օրեք այցելելով ինձ, հանձնեց կից ներկայացվող գրության բնօրի-  
 նակը բժշկական ֆակուլտետի ուսանող Պանիդտա Զոսիմայի (Զոսիմ) մասին հետաքննության  
 կողմից հայտնաբերված հետևյալ մանրանասներով. նա հայտարարել է, որ իրեն ոչինչ հայտնի  
 չէր հայկական շարժմանը Փափազյանի և Ստոյանովի մասնակցության մասին: Մինիստրը բա-  
 նավոր հավելեց, որ այդ ամձնավորությունը, ակնհայտորեն անգիտակցարար, պատանեկան  
 հրապուրանքների ազդեցության տակ է և իրենից քաղաքական վտանգ չի ներկայացնում: Այդ  
 պատճառով էլ ո՛չ Զոսիմը, ո՛չ նրա ընկերը դատական պատասխանատվության չեն ենթարկ-  
 վել, նրանց նկատմամբ ոստիկանական միջոցներ չեն կիրառվել, ուստի նրանց ֆոտոլուսան-  
 կարները չեն հանվել:

Ընդ որում պր-ն Մարգիլունը նշեց, որ քննությամբ պարզվել է, որ երկրորդ ուսանողը՝ Մու-  
 շոյը, բոլորովին անմասն էր Փափազյանի և Ստոյանովի գործերին, և վերջինիս ձերբակալութ-  
 յունը պայմանավորված էր նրանով, որ մտերիմ կապեր ունենալով ուսանող Զոսիմի հետ,  
 կասկածվում էր հայկական քարոզչությանը մասնակցելու մեջ:

Տեղեկացնելով վերը նշվածի մասին, մինիստրը ինձ հանձնեց ոռոմինական լեզվով լրացու-  
 ցիչ տեղեկություններ, որոնք քաղվել են Փափազյանի մոտ հայտնաբերված ուսերեն և հայերեն  
 լեզուներով նամակներից: Պատիվ ունեմ ուսերեն թարգմանությամբ կորզված այդ տեղեկութ-  
 յունները, որպես լրացում իմ նամակին, ուղարկել Զեզ, Կայսերական Մինիստրությանը 1894 թ.  
 սեպտեմբերի 21-ի N 47 և այս տարվա հունվարի 6-ի N 1 գեկույցներով:

Ընդունեք, Ողորմած Տեր, իմ խորին հարգանքը:

## Թերթ 20-25

Բոլիսարեստ, N 74, 5 ապրիլի, 1895 թ.

**Վարտանեկ Փափազյանի գործը**

### Էջ 2

Սեկ նամակ

Սիրեկի Արմենակ<sup>6</sup>, ես ստացա նաև երկրորդ նամակը Մուրադի<sup>7</sup> և թիֆլիսցիների հետ  
 կապված դեպքերի մասին բոլոր տեղեկություններով: -Պողամեսը իմ լսվագոյն ընկերներից է  
 և Թաղիի<sup>8</sup> բարեկամը. -Կարող եք նրան լիակատար վստահությամբ երաշխավորել պ-ն Ո-սո-  
 տոմին և վերջինիս խնդրել օգնել նրան խորհուրդներով (ստորագրություն) Մարտիրոս<sup>9</sup> Օդեսա:

Verso (մեկ նշում)

Տեղեկանալ մշեցի Խաչիկ Ասվաղությանի սրճարանում, որը բնակվում է Սուլիմում (Բու-

6 Ամենայն հավանականությամբ նամակի հասցեատերը Արմենակ Ղազարյանն է՝ Յրայր-Ղժոխը, որը նախքան Կովկասից կրկին երկիր անցնելը՝ 1894-ին այցելել է Ռումինիա: Կարո Սասունու վկայությամբ՝ Յրայրը Ռումինիայի «Յայ գաղութը կազմակերպեց, ու այդ տեղեն իր հետ առա մօս 50 երիտասարդներ (Սերոր Արդիւրը եւ Անդրանիկը այդ խումբին մէջն էին) եւ վերադարձաւ Կովկաս, Երկիր անցնելու եւ գենքի փոխադրութեան գիծերը պատրաստելու»: Տես Կ. Սասունի, Յրայրի դերը հայ ազատագրական շարժման մէջ (Ակնարկ մը անոր յեղափոխական նկարագրին վրա), Պեյոլոր, Տպարան «Ալուա», 1964, էջ 18:

7 «Մուրադը» Սեծն Մուրասն է Համբարձում Պոյածյանը, որը 1893-ին անցել էր Թիֆլիս՝ Սասունի համար գենք ու գինամբերը հայրայելու:

8 «Պոյածն» և «Թաղի» անվանումները ուստիկանների կատարած սխալ թարգմանության արդյունքուն աղավաղվել են, ուստի առայժմ անհնար է պարզել նրանց ինքնությունը:

9 Օդեսայում գտնվող «Մարտիրոս» Մարտիրոս Մարգարյանն է Սաֆոն:

միլնիում) Արմենակ-Դժոխքի<sup>10</sup> մասին՝ Հովհաննես Սելբոնյանից:

Ամենայն հավանականությամբ բողջուր է «Դժոխք-Արմենակից» (Քարգմանություն):

#### Էջ 4

Նամակ՝ հասցեազրված Ռուսումին Ժնևից 1894 թ. դեկտեմբերի 1-ին. ստորագրությունը բացակայում է:

- Թող պատասխանեն մի քանի նամակների ստացման մասին. տեղեկացվում է Օդեսայից և Կոնստանդնուպոլիսից երկու նամակների ուղարկման և մեկ նամակի մասին՝ «Journal de Jeneuse»-ին, որում նկարագրվում է «Սողոմի կործանումը» և վերջապես՝ «Դրոշակ» անսագրի 13-րդ համարը Բուլիարեստ՝ Ստոյանովի հասցեով, և եթե նա դրանք չի ստացել, ապա դա եղել է այլ պատճառներով և նպատակով: Ուղարկողը խնդրում է հասցեատիրոջը օգտագործել բոլոր շանթերը ողջ ուղարկվածը ստանալու համար, հատկապես՝ Օդեսայից և Կոնստանդնուպոլիսից (այնուհետև հաջորդում է մեկ էջ այլ ձեռագրով, հայերեն տառերով անհայտ լեզվով գրվածք): Նամակը, որը ցանկանում եք ուղարկել տուն, գրիր շուտով և հասցրու մեզ այստեղ, մենք այդպիսիք ուղարկել ենք ըստ հասցեի:

#### Էջ 5

Նոյեմբերի 28-ին Օդեսայից ուղարկված նամակը, որը չունի ստորագրություն, անանուն է. հեղինակը հաղորդում է, որ ինքը գրել է նրան նաև այլ նամակներ՝ «Պարասկե Ստոյանով», Stradella Dianei N 2, Թեյլորի փողոցի մոտ, Բուլիարեստ՝ Ռուսումին փոխանցելու համար:

#### Էջ 6

(Ռուսերեն՝ «Օդեսա» Մուրատովին)

Ապրանքը ուղարկված է:

#### Էջ 7

Առանց ստորագրության նամակ. հասցեազրված է Զինային<sup>11</sup>, որում ուղարկողը բողոքում է իր մեկուսի կյանքից և իր պետին ծառայելու հնարավորության բացակայությունից, որը նաև իր հոգեոր հայրն է. նա ցավում է այն ժամանակների համար, երբ ապրում էր բավարարության մեջ՝ բարեկամների և ծանրորների շրջանում և հիշեցնում է իրեն չուղարկված 200 ուրիշ մասին, որքայի տոնը շարունակվում է 7-րդ էջում և վերջացնում է իր բարեկամին հաղորդելով «որպես past scup», որ Կովկասյան նահանգում հրաման է տրված, որ Լոնդոնից, Արենքից, Նյու-Յորքից և Մարսելից ստացված բոլոր նամակները կասեցվեն և կնքվեն պետերի կողմից և կազմվեն արձանագրություններ:

#### Էջ 11

Նամակը անհասկանալի ձեռագրով է, հասցեազրված է մի բարեկամի. «Բարեկամ, ներիք, որ խոստացված 12 հասցեները չեմ կարող փոխանցել, բացի հետևյալ հասցեներից (այս հասցեները գրված են ուսերեն լեզվով).

1) Ասարախան, Խաչատոր Դանարյանցին:

2) Դոմի-Ռոստով, Տագանրոդյան պողոտա, Բորիս Յաղությանցին:

3) Թեմիր-Խան-Շուրա, Նորին բարեծնություն Ելենա Հովակիմյանին:

10 Արմենակ Դժոխքը Արմենակ Ղազարյանն է Յրայր:

11 Նամակի բովանդակությունը ցույց է տալիս, որ ամենայն հավանականությամբ նրա հասցեատերը Քրիստովոր Միքայելյանի կին է, իսկ Ռուսումի կողմից «հոգեոր հայր» պատվանդնին արժանացած անձը Քրիստովոր Միքայելյանը:

- 4) Թիֆլիս, Վարկային ընկերություն, Նորին բարեծնություն Լազար Տիգրանյանին:
- 5) Փոքր, «Նադեժդա» գրասենյակ, Թոմաս Միերյանցին<sup>12</sup>:

Verso

Ներքնում մատիտով արված գրություն է հայրենասիրական բովանդակությամբ:

## Էջ 12

(11-րդ էջից սկսվող նամակի շարունակությունը):

Ես տեղեկացա, որ 200 000 մարդ ենթարկվել է մեծ վտանգների և նրանց կրած դժբախտությունները չեն կարողացել հասնել քաղաքակիրք մարդկանց ուշադրությանը և 9-10 տարեկան փորձահասակ երեխաներին հրապարականորեն գլխատել են Սադիկի հրապարակում.-25 հոկտեմբերի<sup>13</sup>:

## Էջ 13

94 թ. նոյեմբերի 22-ի նամակը «Լիզայից»<sup>14</sup> և ապա «Սիմոնից»<sup>15</sup> հասցեագրված Ուստումնին: Նրանցով հաստատում են երկու նամակների ստացման մասին, որոնցից մեկը՝ Սելիկյանի եղբոր միջոցով, որոնք վերաբերում են ընտանեկան գործերին:

## Էջ 14

Մ. Կախակին<sup>16</sup> ուղարկված նամակ Ժնևից (28 դեկտեմբերի 1893), ուղղված անհայտ անճնավիրությանը, որում արտահայտում է իր անհանգստությունը նամակներ չստանալու կապակցությամբ և խնդրում է անմիջապես իրեն պատասխանել, այնուհետև շարունակում է՝ տեղեկացնելով, որ կարի մեքենաներն այստեղ պահանջարկ չտնեն: Հավասարապես կարիք չկա նաև պատրաստի ապրանքի, որոնք այստեղ չեն օգտագործվում: Ընդհանրացնում է, որ այս ամիս ինքը եղել է Ֆրանսիայում և Խոտախայում, իսկ գարնանը պատրաստվում է այցելել Բուլղարիա, Սերբիա, Ռումինիա և Ավստրո-Հունգարիա<sup>17</sup>: Խնդրում է իրեն հասցեագրված նամակները հասցեագրել Լոնդոն, Փարիզ, Լոզան և Ժնև, սկզբի համար նշում է հետևյալ հասցեն. Ժնև. «Poute de la club» 39, կամ համալսարան Բ.Վ.:

## Էջ 15

Նամակը հասցեագրված է Քոքորին՝ Օդեսայից, 94 թ. դեկտեմբերի 3-ին Գարմրարի<sup>18</sup> կողմից:

Թանկագին Ջորջ, ես ստացա Հովհաննեսից և ուղարկում եմ քեզ: Ստացե՞լ ես դու նամակ Թիֆլիսից: Սինչ այժմ իմ կողմից քեզ ուղարկված նամակներից սա արդեն երրորդն է առ լ: Ինչո՞ւ դու չեն սկսում գործել հատկապես հիմա, երբ կա այդպիսի ծայրահեղ անհրաժեշտություն, ինչ էլ դու ասես.-ինձ կանչում են Թիֆլիս և մինչև իմ մեկնելը դու պետք է արտահայտվես, պատասխանիր (ստորագրություն): Գարմրար:

12 Սրանք ժնևից «Պրոշակ» ստացողների հասցեներն են, որոնցից վերջինը՝ Թովմաս Միերյանը, եղել է 1880-ականներին Երևանում բացահայտված «Յայ ազգասերների» կազմակերպության գործուն անդամներից մեկը:

13 Խոսքը, ամենայն հավանականությամբ, Կ. Պոլսում տեղի ունեցած 1895 թ. հոկտեմբերյան դաժան շարդերի մասին է:

14 «Լիզա» օրինորդ Եղիսաբեթ Մելիք-Շահնազարյանն է՝ Ուստումի նշանածը:

15 «Սիմոն» Զավարյանն է:

16 «Մ. Կախակը» դաշնակցականների կողմից քաղաքների ծածկագրված անվանումներում խիստ տարածված «Մեծ քաղաք» բնորոշումն է, որի սուսպահ նկատի էր առնվտակ Թիֆլիսը:

17 Սա Եվլուպական մի շարք Երկրներում գենքի տարբեր տեսակներ («կարի մեքենաներ») ուսումնասիրած Ուստումի ծածկագիր հաշվետվությունն է, որի արձագանքները կան նաև նրա այլ նամակներում:

18 Ուստիկանների կողմից աղավաղված անվանում է, որը չհաջողվեց բացահայտել:

**Էջ 16**

Սիմոնի նամակը Ո-ոստոմին<sup>19</sup> առանց վայրը և ամսաթիվը նշելու: Տեղեկացնում է N 13-ի հրատարակման և այն դժվարությունների մասին, որոնց նա հանդիպել է հրատարակման ժամանակ: Տեղեկացնում է, որ որոշել են, որպեսզի Ո-ոստոմը չբացակայի այդտեղից; 1) որ նա չի հասցնի որևէ բան անել և 2) որ նա իրեն կարող է ենթարկել որևէ վտանգի: Գրում է նաև, որ Սիմոնը նրան տեղեկացրել է 280 ոտքը մասին, որից սկզբում ստացել է 100, այնուհետև՝ 80, հաջորդ անգամ՝ 50, իսկ մնացած 50-ի մասին լրում է, թե ինչ է արել;

verso և ամելյունում այլ ձեռագրով գրված է հետևյալը. ընդունիր համբույրներս: (Ստորագրված է) Քոքոր:

**Էջ 17**

Թե՛ ուղարկողի և թե՛ ստացողի ստորագրությունները անընթեռնելի են: Նամակում (գրված նոյեմբերի 14-ին, առանց վայրը նշելու) խոսվում է ընտանեկան գործերի մասին, տեղեկացնում է, որ կինը և աղջիկը հիվանդ են, և հրավիրում է զալ առաջին իսկ «Սեղեիզ» շոգենավով:

**Էջ 19**

94 թ. դեկտեմբերի 1-ին գրված նամակ Կոստանդնուպոլսից (ստորագրությունը անընթեռնելի է): Նամակը սկսվում է նախատղ տոնով ինչ-որ առևտրական գործերի մասին (նամակի մեջտեղում գտնվող մյուս տողերը անընթեռնելի են), իսկ վերջում նշված է ծածկագրով հասցե, որին հաջորդում է երկու բառ ոռուերենով:

**Էջ 20**

N 13 Ծածկագրի երկու տողերը՝

12, 7, 1, 4, 2, 6, 97, 13, 14, 27, 29, 5, 2, 4, 2, 2, 13, 7, 34, 18, 31, 9, 34, 18, 31, 9, 34, 2, 6, 34, 18, 7,  
157:

Այնուհետև ոռուերեն տառերով՝ Օղեսայի վրայով:

Սրան հաջորդում է երկրորդ ծածկագրված տեքստը՝

6, 13, 14, 15, 7, 29, 9, 5, 4, 5, 10, 4, 2, 29, 5, 2, 6:

**Էջ 21**

Անձնական նամակ, գրված (ամենայն հավանականությամբ) կնոջ կողմից մի անձնավորության, որի անունը չի նշվում: Խոսվում է ճանապարհորդությունների, ընտանիքում ծննունդների և մահերի մասին:

**Էջ 23**

1894 թ. դեկտեմբերի 14-ին Բոլիսարեստից մի անձնավորության կողմից ուղարկված փոստային բաց նամակ, որի ստորագրությունը անընթեռնելի է, և այն հասցեգրված է Լոնդոն (հասցեատերն անընթեռնելի է ս. Քոռողի):

Մինչև երեկ ես բացարձակապես ազատ եմ, թեպետ մտալիք էի օրերս հեռանալ, բայց, ինչպես տեսնում ես, ես դեռ այսուեղ եմ և կարող է պատահել՝ երկար ժամանակ: Պրեֆեկտը խոստացավ թույլ տալ ինձ մեկնել, եթք ես ցանկանամ, սակայն անսպասելի հանգամանքները խանգարեցին դրան: Վերջապես երեկոյան ինձ տարան ոստիկանություն, որտեղ ես գտնվում եմ մինչև իմաս և որտեղից քեզ գրում եմ:

Ձք (ստորագրություն) Ո.

19 Թերևս պետք է կարդալ հակառակ հաջորդականությամբ՝ Ոստոտմի նամակը Սիմոնին:

## Էջ 24

Բայ նամակ Ռուս(շուկ)ից՝ հասցեագրված պր-ն Փափազյանին՝ Գալաց, իսկ այնտեղից էլ՝ Լոնդոն. 15 դեկտեմբերի 94 թ.:

Թանկագին քարեկամ. քո նամակը ստանալով՝ ես հեռագիր ուղարկեցի այնտեղ, ուր անհրաժեշտ էր՝ քեզ ազատելու համար: Ինք ես այդպես գրել, բայց պարզվում է, որ դու նրան արդեն տեղեկացրել ես: Ես դեկտեմբերի 7-ին մեկնում եմ Ժնևի հետ կապված: Փողը կողարկեմ հնարավորինս շուտ, բայց ու՞ն: Չէ՞ որ դու գրում ես, որ հասցեն գրել ես, բայց ես այստեղ ոչ մի հասցե չեմ տեսնում: Ծտապ ուղարկիր հասցեն, որպեսզի ես կարողանամ առաքել կամ էլ կողարկեմ այն Պարասկենին, որպեսզի նա ինքն ուղարկի: Ես կարծում եմ, որ մենք կտեսնվենք: Գրկում եմ քեզ. քո Ստոյանով<sup>20</sup>:

## Էջեր 25 և 26

Քորորին հասցեագրված նամակ (որի ստորագրությունը անընթեռնելի է), գրված է հոկտեմբերի 18-20ին (քվականը և վայրը նշված չեն): Ուղարկողը չափազանցված կերպով գրվում է. Քորորին՝ իրենց գործի համար կատարած ակտիվ պրոպագանդայի համար: Այնուհետև տախս է մի քանի խորհուրդներ գրքերի տարածման հետ կապված և արտահայտում է իր կարծիքը այն մարտավարության մասին, որով պետք է առաջնորդվեն: Ապա ինքն իրեն հարցնում է. ի՞նչ է շովինիստը և ի՞նչ է տոցիալիստը (հաջորդում են մի քանի տողեր ուստերեն լեզվով, գոեհկացվում է տոցիալիզմի մաքուր տեսությունը, հաշտեցնելով աշխատանքի և կապիտալի պայքարի համընդիմանոր նշանակությունը ազգային հարցի հետ (քնորշելով ապուշներ, սրիկաներ, լիտիներ և խարեւաներ) և վերջում խնդրում է շնորհավորանքներ փոխանցել իր ծանրոթներից (Անընթեռնելի) ... Սիմոնին և Զինային:

## Էջ 27

Երկու նամակներում գրադպում են ընտանեկան հարցերով. նամակներից առաջինը, գրված 1894 թ. օգոստոսի 9-ին, առանց ստորագրության է և առանց հասցեի: Երկրորդը, նոյն թույնակությանը, Մելիքից<sup>21</sup> է, 25 օգոստոսի 1894 թ. Թիֆլիսից, նոյնպես առանց ստորագրության:

## Էջ 29

Զախիսայի նամակը (ուղղված անհայտ անձանց):

Թանկագին ընկերներ: Իմ նամակը սկսում եմ սովորական ելույթով: Զալոն<sup>22</sup> տեղեկացնում է ընկերներին, որ 26-27 օր է անցել այն ժամանակից, երբ սովորները մեկնել են և նրանցից առաջմ ոչ մի տեղեկություն չունի և ֆիշերի միջոցով ուղարկված ամսագրերը նա ստացել է սովորական ճանապարհով:

## Էջ 30

Թղթերի վրա մատիտով արված տարբեր նշումներ, որոնք վերաբերում են ցորենին և նրա գներին, տարբեր տեսակի մոլուստակներին, կտորներին և ծխախոտին: Այնուհետև տեղեկացվում է տնային ծախսերի մասին, ինչպես օրինակ՝ բնակարանի վարձը, սեղանի համար ծախսերը և այլն: Վերջում մի քանի նշումներ տարբեր պարտքերի և այլ ճանրութների մասին:

20 Հնարավոր է, որ այս նամակի հեղինակը, որը միջնորդել է Ռուսումին ազատելու համար, Զախարի Ստոյանովն է:

21 «Մելիք» Նովիաններ Յուսուֆյան (Վահանյան) կեղծանունն է, որը սակայն գտնվում էր Կ.Պոլսում: Ուստի հնարավոր է, որ գործայն հեղինակը Բարսեղ Մելիք-Գրիգորյանն է (Ղարա-Մելիքը):

22 «Զալոն» կուսացության ղեկավառությունն է, ուվազ պարագայում Բյուրոն: Տեղեկությունը թերևս վերաբերում է Քրայի ու Սերոբ Աղբյուրի Երկիր անցնելու փաստին: